

Բայց հակառակը ճիշտ չէ. այսինքն երբ մէկու մը արեան քրն-  
նութիւնը ժխտական է այդ կը նշանակէ թէ.—

Այդ արիւնին մէջ բնաւ չեմ մտեր (բնաւ սիֆիլիս չէ առած),  
կամ մտած եմ բայց անհետացած (սիֆիլիս առած է, բայց բուժ-  
ուած է),

կամ մտած եմ, բայց դեռ ժամանակ չեմ ունեցած թոյնս արտա-  
տաղրելու (չարկեղը շինելէ ետք մինչև 12—17 օր):

Եւ կամ զեղերու ու տարիքի ազդեցութեան տակ տկարացած  
եմ, մարմնին մէկ անկիւնը քաշուած եմ ու առժամապէս ի վիճակի  
չեմ թոյն արտաղրելու:

Կը տեսնէք թէ որքան հակասական նշանակութիւններ ունի  
արեան ժխտական քննութիւն մը: Բժիշկները, հիմնուելով հիւան-  
դին անցեալին, կրած դարմանումին, արեան նախապէս կատարուած  
քննութիւններու, արդիւնքին և ուրիշ կարգ մը պարագաներու վրայ  
կրնան որոշ եզրակացութիւն մը հանել, երբ արեան քննութեան պա-  
տասխանը ժխտական է: Բայց վստահ կրնաք ըլլալ թէ շատ անգամ  
զանտնք նեղ կացութեան մէջ կը դնեմ: Տեսնելու էք թէ խեղճերը  
որքան նեղութիւն կը քաշեն սիֆիլիսով վարակուած և քիչ — շատ  
դարմանուած իրենց հիւանդները համոզելու որ, արեան քրն-  
նութեան ժխտական պատասխան մը՝ բուժում չի նշանակել: Բարե-  
բախտաբար զօհերս շատ անգամ ականջ չեն կախեր և տեսնելով որ  
ոչ ցաւ ունին, ոչ վէրք և իրենց արիւնն ալ («մաքուր») է, չեն շա-  
բունակեր դարմանուիլ ու յաճախ գէշ կարծիք ալ կը կազմեն իրենց  
բժիշկին մասին: Ու յանկարծ օրին մէկը, տարիներ վերջ, տեղէ մը  
ծայր կուտամ, ապշահար ու սարսափահար ձգելով զօհերս:

Գանք այժմ ձեզ հետաքրքրող հարցին, Փրանկախտաւոր մը կըր-  
նա՞յ մոլուսնանայ եւ ի՞նչ պայմաններու մէջ:

(Շարունակելի)

ԲԺ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՁ ՄԱՀԵՐՈՒՆ ԹԻԻԸ ՀԵՏՍՉՀԵՏԷ Կ'ԱԻԵԼՆԱՅ

Անցեալ տարի 1432000 մահ պատահած է, նախորդ տարուընէ  
53000 աւելի: 100000 հոգիի վրայ 127 հոգի մեռան սրտի հիւան-  
դութենէ, 88 թոքատապի հետեւանքներէն 81 քաղցկեղէ, 56  
կաթուածէ, 25 էնֆիլուէնցայէ, 16 հոգի ինքնաշարժի արկածէ,  
12 անձնասպանութեան և 5 ալ ոճիրի հետեւանքով:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԱՅԽՍԹԱԿԸ վերջերս օրէնք մը քուէարկեց  
որու նպատակն է մանուկները և պատանիները պաշտպանել  
պոռնկագրական հրատարակութիւններու դէմ: